ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

էլ փոստ sirvard.gevorgyan@justice.a

№ /27.3/49082-2023
«17» նոյեմբեր 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բալասյան,

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ Ե-1593/23 գրության՝ կից ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Բյուրեղավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 40-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Invalid signature

X

Sirvard Gevorgyan

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN SIRVARD 6804830105

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 49-3037/23
«22» 11 2023 թ.

Կատարող՝ Արուսյակ Ֆահիրադյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Հեռ. (010) 594-129

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Բյուրեղավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 40-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»» որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Բյուրեղավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 40-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»» որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում «ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ» բառերը:

Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 1-ին, 2-րդ կետերին, Հավելվածի վերնագրին և Հավելվածի 1-ին կետին:

2. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին:

3. Նախագծի 1-ին կետի համաձայն նախատեսվում է սահմանել Բյուրեղավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծման ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները:

Մինչդեռ Նախագծի Հավելվածի 1-ին կետի համաձայն՝ սույն չափորոշիչներով սահմանվում են Բյուրեղավան համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալական աջակցության ոլորտում համայնքի **պարտադիր և** կամավոր խնդիրների լուծման նպատակով, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված

ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ավագանու կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, ծառայություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման չափորոշիչները, դրանց համապատասխան գնահատման միավորները և ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը:

Հաշվի առնելով Նախագծի կարգավորման առարկան, անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 1-ին կետը վերանայել, միաժամանակ Նախագծով նախատեսելով նաև կարգավորումներ, որոնք կսահմանեն համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծման ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը:

Բացի այդ, հարկ է նկատի ունենալ, որ Նախագիծը պետք է վերաբերի միայն համայնքի **կամավոր խնդիրների լուծմանը:**

4. Նախագծի Հավելվածի 2-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով է համայնքի ավագանին ստեղծում համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովը:

Բացի այդ, հիմք ընդունելով Նախագծի ամբողջ Հավելվածում կիրառվող ձևակերմումները՝ անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 2-րդ կետում «(այսուհետ՝ հանձնաժողով)» բառերը փոխարինել «(այսուհետ՝ Հանձնաժողով)» բառերով:

5. Նախագծի Հավելվածի 5-րդ կետի «Սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հանձնաժողովը» բառով՝ հիմք ընդունելով Նախագծի Հավելվածի 2-րդ կետի կարգավորումը:

6. Նախագծի Հավելվածի 14-րդ կետի «**պետական** և տարածքային **կառավարման մարմիններին**» ձևակերպումը անհրաժեշտ է վերանայել, այն համապատասխանեցնելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում կիրառվող հասկացություններին:

7. Նախագծի Հավելվածի 15-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է իրականացնել միջոցառումներ և գործառույթներ, որոնք ուղղված են համայնքի կարիքների հիման վրա՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման, **ընդունման և դրանց իրականացման գործընթացին:**

Սույն դեպքում, հարկ է նկատի ունենալ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ **համայնքի ղեկավարը** տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ **կազմակերպում է** համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա **տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը:**

Նույն օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ աջակցող ցանցի մասնակիցների հիմնական պարտականություններն են **մասնակցել** համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ **տեղական սոցիալական ծրագրերի *մշակման* աշխատանքներին:**

Իսկ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ **տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից**, տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ **գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին: Տեղական սոցիալական ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի *կամ պայմանագրային հիմունքներով՝ համայնքում գործող աջակցող ցանցի մասնակցի կողմից:***

Վերոգրյալ դրույթները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 15-րդ կետի 1-ին ենթակետը խմբագրել, համապատասխանեցնելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի վերոհիշյալ դրույթներին:

8. Նախագծի Հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետի «Արցախի Հանրապետությունից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Լեռնային Ղարաբաղից» բառերով:

9. Նախագծի Հավելվածի 3-րդ գլուխը և 16-րդ կետը վերաբերում են **աջակցությունից օգտվելուն, մինչդեռ** 17-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դիմումը ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ անձամբ՝ դիմումի հետ ներկայացվում են **ծառայության** տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ **Ծառայության** տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը):

Սույն դեպքում, պարզ չէ, ինչ ծառայության մասին է խոսքը, ուստի անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 17-րդ կետի 1-ին ենթակետը վերանայել, այն համապատասխանեցնելով Նախագծի Հավելվածի 3-րդ գլխին:

Բացի այդ, Նախագծի Հավելվածի 17-րդ կետի 1-ին ենթակետի «բաժինը» բառն անհրաժեշտ է փոխարինել «գլուխը» բառով: Նշված դիտարկումները վերաբերում են նաև Նախագծի Հավելվածի 17-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերին:

10. Նախագծի Հավելվածի 18-րդ կետով սահմանվում են դիմումին կցվող **սոցիալական վիճակը հավաստող փաստաթղթերը**, որոնց թվում են՝ դիմումատուի **անձը հաստատող փաստաթղթի պատճենը, տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին, բժշկասոցիալական փորձաքննության Հանձնաժողովի որոշման պատճենը, բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից:**

Սույն դեպքում, հարկ է նկատի ունենալ, որ թվարկված փաստաթղթերը չեն հանդիսանում սոցիալական վիճակը հավաստող փաստաթղթեր, ուստի անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 18-րդ կետի կարգավորումը վերանայել:

Բացի այդ, Նախագծի Հավելվածի 18-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերը բովանդակային առումով առանձին կարգավորումներ են, ուստի անհրաժեշտ է դրանք նախատեսել առանձին կետերով:

Միաժամանակ, Նախագծի Հավելվածի 18-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանվում է, որ էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ **դիմումը պետք է լինի ստորագրված** և դիմումին կցվում են սույն կետում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

Սույն դեպքում, պարզ չէ, թե ինչ կարգով պետք է ստորագրվի դիմումը՝ էլեկտրոնային ստորագրությամբ, թե ձեռագիր ստորագրությամբ: Նշվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 18-րդ կետի 8-րդ ենթակետը հստակեցնել:

11. Նախագծի Հավելվածի 20-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին տրվում է համապատասխան ընթացք, անհրաժեշտության դեպքում **կատարում է տնային այցելություն**, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում:

Սույն դեպքում պարզ չէ, թե ում կողմից է իրականացվում տնային այցելությունը, ուստի անհրաժեշտ է Նախագծի 20-րդ կետը հստակեցնել:

12. Նախագծի Հավելվածի 21-րդ կետի համաձայն՝ **հրավիրվում է** Հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:

Սույն դեպքում պարզ չէ, ում կողմից է հրավիրվում Հանձնաժողովի նիստը, ուստի անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 21-րդ կետը հստակեցնել:

13. Նախագծի Հավելվածի 22-րդ կետի համաձայն՝ **Հանձնաժողովի տված դրական եզրակացության** հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում:

Նախագծի Հավելվածի 24-րդ կետով սահմանվում է, որ սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ **որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:**

Իսկ Նախագծի Հավելվածի 31-րդ կետի համաձայն՝ Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է **եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:**

Սույն դեպքում պարզ չէ, թե ինչ ժամկետներում է տրամադրվում եզրակացությունը, ուստի անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 22-րդ կետը հստակեցնել, քանի որ հստակ ժամկետ չսահմանելու դեպքում գործնականում կարող են առաջանալ խնդիրներ որոշման ընդունման սահմանված ժամկետի պահմանման հետ:

Բացի այդ Նախագծի Հավելվածի 22-րդ կետում առկա է չհամարակալված պարբերություն, ուստի հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը՝ անհրաժեշտ է չհամարակալված պարբերությունը համարակալել:

14. Նախագծի Հավելվածի 23-րդ կետի «օրենքով» բառից առաջ կիրառվող «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի կարգավորումները:

15. Նախագծի Հավելվածի 33-րդ կետի 5-րդ ենթակետում կիրառվում է «պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք - 2 միավոր» ձևակերպումը, իսկ Նախագծի Հավելվածի Ձև 1-ի «Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ» գլխի 5-րդ կետում կիրառվում է «պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք **(յուրաքանչյուրին)**» ձևակերպումը:

Նշվածը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 33-րդ կետի 5-րդ ենթակետում և Նախագծի Հավելվածի Ձև 1-ի «Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ» գլխի 5-րդ կետում կիրառվող ձևակերպումները համապատասխանեցնել միմյանց:

16. Նախագծի Հավելվածի 33-րդ կետի 6-րդ ենթակետում կիրառվում է «1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք» ձևակերպումը:

Սույն դեպքում, հիմք ընդունելով «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի կարգավորումները՝ անհրաժեշտ է վերոհիշյալ ձևակերպումը վերանայել, այն համապատասխանեցնելով նշված օրենքին:

Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի Հավելվածի Ձև 1-ի «Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ» գլխի 6-րդ կետին:

17. Նախագծի Հավելվածի 33-րդ կետի 12-րդ ենթակետում կիրառվում է «(անհետ կորած)» բառերն անհրաժեշտ է փոխարինել «(դատարանի որոշմամբ անհայտ բացակայող ճանաչված)» բառերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածը:

18. Նախագծի Հավելվածի 33-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) ընտանիք - 4 միավոր:

Սույն դեպքում հարկ է նկատի ունենալ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, համաձայն որի՝ **կյանքի դժվարին իրավիճակ** է համարվում **հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող:**

Վերոգրյալը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 33-րդ կետի 20-րդ ենթակետի ձևակերպումը վերանայել, այն համապատասխանեցնելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:

19. Նախագծի Հավելվածի 5-րդ գլխի 31-րդ կետի համաձայն՝ սույն չափորոշիչների իմաստով **ընտանիք է համարվում միևնույն հասցեում հաշվառված, մշտապես բնակվող համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:**

Սույն դեպքում հարկ է նկատի ունենալ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, համաձայն որի՝ **ընտանիք է՝ միևնույն բնակության վայրում փաստացի բնակվող անձանց ամուսնական, ազգակցական, խնամիական կապերի վրա հիմնված փոքր սոցիալական խումբ, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն, ունեն ընդհանուր բյուջե, ընդհանուր շահեր, կապված են փոխօգնության, բարոյական ու իրավական փոխադարձ պատասխանատվության հիմունքներով, ինչպես նաև միայնակ ապրող անձ.**

Վերոգրյալը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է Նախագծի Հավելվածի 31-րդ կետի ձևակերպումը վերանայել, այն համապատասխանեցնելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին:

20. Նախագծի Հավելվածի 6-րդ գլխի 32-րդ կետի 1-ին ենթակետում պարզ չէ ինչ գրության մասին է խոսքը, ուստի անհրաժեշտ է հիշյալ ենթակետը հստակեցնել:

21. Նախագծի Հավելվածի 5-րդ գլխի 33-րդ կետից հետո անհրաժեշտ է վերանայել կետերի համարակալումը:

22. Նախագծի Հավելվածի 6-րդ գլխի 32-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի «և(կամ)» ձևակերպումն անհրաժեշտ է վերանայել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջները:

23. Նախագծի Հավելվածի գլուխների համարակալումն անհրաժեշտ է վերանայել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումները, համաձայն որի՝ **նորմատիվ իրավական ակտի բաժիններն ու գլուխները համարակալվում են արաբական թվանշաններով**:...

Իրավական ակտերի փորձաքննության

գործակալություն